ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էլեկտրամագնիսներն օգտագործում են գյուղատնտեսության մեջ՝ մշակաբույսերի և մոլախոտերի սերմերը զատելու համար: Մոլախոտերի սերմերը մազմզոտ են և կպչում են տարբեր մարմինների, օրինակ, կենդանիների բրդին և տեղափոխվում մայր բույսից շատ հեռու՝ տարածվելով շրջապատում: Սերմերին երկաթի փոշի խառնելիս երկաթի մասնիկները բոլոր կողմերից պինդ կպչում են մոլախոտերի սերմերին, սակայն չեն կպչում օգտակար բույսերի ողորկ սերմերին: Ընկնելով ուժեղ էլեկտրամագնիսի մագնիսական դաշտ՝ մոլախոտերի սերմերն անջատվում են օգտակար բույսերի սերմերից. էլեկտրամագնիսը խառնուրդից անջատում է այն սերմերը, որոնց երկաթի խարտվածք է կպել:

Էլեկտրամագնիսները լայնորեն կիրառվում են նաև բժշկության մեջ Կան էլեկտրամագնիսական սարքեր, որոնց օգնությամբ կարելի է, օրինակ, մարդու աչքից հեռացնել նրա մեջ պատահաբար մտած երկաթի փոքրիկ տաշեղները

Հզոր էլեկտրամագնիսներ են օգտագործվում նաև շերտագրող սարքում, որի միջոցով հետազոտում են մարդու ներքին օրգանները, մասնավորապես՝ գլխուղեղը